խմբերը այցելեցին Կաղզուանի աղահանքերն ու Փենեաքի ածխահանքերը և բերին մշակած զեկուցումներ աղի և ածուխի արտադրության և ածխացման մասին: Աղն էլ, ածուխն էլ շահագործում էին կառավարության միջոցներով: Բացի այդ, ինժ. Կարապետեանը գիտական-հետախուզական ճամբորդություն կատարեց Շիրակում, Նոր-Բայազետում և Սևանի լճի շուրջը: Մասնաւոր ուսումնասիրություն ենթարկուեցին ցեմենտի, չեչաքարի, հանքային ներկերի վայրերը: Պիտի հետազօտուէին նաև Սուրմալուի ոսկետեղերը, Կաղզուանի գունեխը, Շարուր-Դարալագեազի արծաթա-արճճային հանքերը, տորֆի շրջանները, մի շարք շինարարական քարեր և այլն: Ցաջորդող պատերազմական գործողությունները արգելք եղան ծրագրի մի մասի իրագործման: Այդ գործողություններին նաև զոհ գնացին ինժ. Լ. Խատիսեանը, ինժ. Մելիք-Այվազեանը և տեխնիկ Միքայէլեանը, որոնք զբաղուած էին ածուխի արտադրությամբ: Հանքերն արդէն տալիս էին օրական 5—6000 փութ ածուխ, որը Կարս—Մերդենեկ ճիաքարշով փոխադրուում էր Կարս՝ երկաթուղային կարիքների համար և մասամբ մեղմացնում վառելիքի սովը: Ադրբէջանը նաւթ չէր տալիս, և կառավարությունը զերմարդկային ճիգ էր գործ դնում երկաթուղիները կենդանի պահելու համար:

Ամառը Լեռնային Բաժինը ձեռնարկեց հանքային հին օրէնքների փոփոխության և նոր օրէնքների հիմքը կազմում էր հողերի պետականացման ընդհանուր սկզբունքը: Ըստ նոր օրէնսդրության գետնի տակ գտնող բոլոր հարստությունները համարուում էին պետական սեփականություն. մասնաւոր սեփականատէրերը իրաւունք ունէին օգտուելու միայն գետնի երեսից: Նախկին իշխանության օրով կնքուած բոլոր պայմանագրությունները, 6 ամսուայ ընթացքում, կորցնում էին իրենց արժէքը: Այդ անձանց իրաւունք էր տրուում կնքել նոր պայմանագրություններ:

Լեռնարդիւնաբերությունը զարգացնելու նպատակով կազմակերպուում էր յատուկ ընդունարան լեռնային բաժնի կողմից՝ հանքավայրեր գտնողների համար: Հանք գտնողներին պիտի տրուէր վարձատրություն հետևեալ հաշուով. ոսկի և թանգագին քար գտնողներին՝ 1000—5000 ռուբլի ոսկով. արծաթի, կլայեկի, նիկելի, ցինկի, արճիճի, բիսմուտի համար՝ 500—1000ռ., ուրիշ հանքերի համար՝ 100—500ռ., նաւթի, քարածուխի համար՝ 300—3000ռ. և այլն: Օրինագիծը մտցուեց նախարարական խորհուրդ և ընդունուեց հիմնական դծերով:

Լեռնային բաժնին կից հիմնուելու էր Հանքային Խորհուրդ նախարարի նախագահության տակ: Սեպտեմբերին կազմուեց Հանքային Տեխնիկական Ցանձնաժողով՝ բաղկացած Լեռնային բաժնի վարիչ ինժ. Ս. Թուրեանից, օգնական ինժ. Ա. Տէր-Գրիգորեանից, ինժ Մ. Տէր-Դաւթեանից, ինժ. Ն. Տէր-Միքայէլեանից և մէկ շրջանային ինժեներից: Ցանձնաժողովի նպատակն էր հանքային և արդիւնաբերական ուսումնասիրություններ կատարել երկրում: Նոյեմբերին ծրագրուում էր հրաւիրել լեռնա-արդիւնաբերողների խորհրդակցություն, ապա՝ համագումար և այլն: